Հավելված
ՀՀ վարչապետի 2008 թ.
դեկտեմբերի 18-ի N 1037 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ 20-ԱՄՅԱԿԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | «Հաղթանակ» զբոսայգում Աֆղանական պատերազմի վետերաններին նվիրված հուշարձանի բարեկարգման աշխատանքների իրակա-նացում և ավարտում | Երևանի քաղաքապետարան («Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի ներգրավմամբ) | 15.02.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |
| 2. | Աֆղանստանի վետերանների կոմիտեի նախագահ Ռ.Ս.Աուշևի գլխավորությամբ 35 վետերանի այցի ապահովում (տրանսպորտ, հյուրանոց, սնունդ) | ՀՀ պաշտպանության նախարարություն | 01.04.2009 թ. - 06.04.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |
| 3. | Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման 20-ամյա-կի խորհրդանիշով գրքույկ-բուկ-լետի, հուշանվերների, կրծքա-նշանի և այլ պարագաների հրատարակում և թողարկում | ՀՀ պաշտպանության նախարարություն («Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի ներգրավմամբ) | 01.04.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 4. | Ուխտագնացություն դեպի Շուշի, Գանձասար, Ամարաս<br>Հանդիպում Արցախի պետական իշխանությունների և տեղի աֆղանական միության անդամների հետ<br>Սուրբ պատարագ՝ Գանձասարի վանքում | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>(«Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի ներգրավմամբ) | 02.04.2009 թ. - 04.04.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |
| 5. | «Բաց դռների օր» զինված ուժերում Աֆղանական պատե-րազմի վետերանների համար<br>Հանդիպումներ զինծառայող-ների, ռազմամարզական վարժարանների սաների հետ, ինչպես նաև ՀՀ դպրոցների ուսուցչական կոլեկտիվների ու աշակերտների հետ | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ գիտության և կրթու-թյան նախարարություն<br>(«Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի ներգրավմամբ) | 01.04.2009 թ. - 06.04.2009 թ. | ֆինանսավորում չի պահանջվում |
| 6. | Ցուցահանդեսի կազմակեր-պում «Աֆղանական պատերազմը» խորագրով | ՀՀ մշակույթի նախարարություն<br>(«Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի, ՀՀ ազգային արխիվի ներգրավմամբ) | 01.04.2009 թ. - 06.04.2009 թ. | ֆինանսավորում չի պահանջվում |
| 7. | Աֆղանական ու Արցախյան ազատամարտի վետերանների համատեղ այցելություններ մայրաքաղաքում, մարզային կենտրոններում ու համայնք-ներում Արցախյան ազատա-մարտի զոհվածների հուշար-ձաններին, այցելություն «Եռաբլուր», «Հաղթանակ» զբոսայգիներ<br>Ծաղիկների, ծաղկեպսակների զետեղումներ<br>Հիշատակի տուրքի արարողություններ | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան<br>(համապատասխան մարզպետարանների, «Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի ներգրավմամբ) | 01.04.2009 թ. - 06.04.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |
| 8. | Աֆղանական պատերազմին մասնակցած գեներալների և վետերանների հանդիպումը լրագրողների հետ | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>(Հանրային հեռուստառադիոյի խորհուրդ, «Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի ներգրավմամբ) | 01.04.2009 թ. - 06.04.2009 թ. | ֆինանսավորում չի պահանջվում |
| 9. | Հանդիպում ՀՀ պաշտպանու-թյան նախարարության նիստերի դահլիճում՝ | Հոբելյանական միջոցառումների կազմակերպման | 14.02.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | Աֆղանստանում զոհված հայորդիների ծնողների և վետերանների հետ<br>Հիշատակի տուրքի և խրախուսման արարողություն՝ կառավարական ու զերատեսչական պարգևների հանձնմամբ | միջգերատեսչական հանձնաժողով (Հանրային հեռուստառադիոյի խորհրդի, «Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի ներգրավմամբ) | | |
| 10. | ՀՀ տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով հանրությանն իրազեկելու համար կատարել համապատասխան քարոզչական և կազմակերպչական աշխատանքներ<br>«Հայ ժողովրդի մասնակցությունն Աֆղանական պատերազմին» խորագրի տակ իրականացնել բազմաբնույթ հրապարակումներ, ինչպես նաև ցուցադրել արխիվային տեսաֆիլմեր և տեսանյութեր | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Հանրային հեռուստառադիոյի խորհրդի, «Աֆղանական վետերանների միություն» ՀԿ-ի, ՀՀ ազգային արխիվի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ներգրավմամբ) | 01.02.2009 թ. - 15.02.2009 թ. | ֆինանսավորում չի պահանջվում |
| 11. | ՀՀ Նախագահի կամ կառավարական հանձնաժողովի հոբելյանական ուղերձն Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման 20-ամյակի առթիվ | Հոբելյանական միջոցառումների կազմակերպման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ | 15.02.2009 թ. և 01.04.2009 թ. | ֆինանսավորում չի պահանջվում |
| 12. | Հանդիսավոր արարողություն և համերգային միջոցառում Ա. Բաբաջանյանի անվան համերգասրահում՝ նվիրված Աֆղանստանից խորհրդային զորքերի դուրսբերման 20-ամյակի հոբելյանին | ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>Երևանի քաղաքապետարան | 15.02.2009 թ. և 05.04.2009 թ. | ՀՀ պետական բյուջե |
| 13. | Սուրբ պատարագի մատուցում և հոգեհանգստի արարողություն Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ ի հիշատակ Աֆղանական պատերազմում զոհվածների | ՀՀ պաշտպանության նախարարության հոգևոր ծառայության առաջնորդ սրբազան Վրթանես | 15.02.2009 թ. և 05.04.2009 թ. | ֆինանսավորում չի պահանջվում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ